

ԶԱՅՆ

ՀԱՄՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

2006թ. ապրիլի վերջին «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն Թամարա Պողոսյանը Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում ու Ռոստովի մարզում հանդիպումներ ունեցավ տեղի հայկական համայնքների և մշակույթի գործիչների հետ: Շրջագայության հիմնական նպատակն էր հրավիրել այդ վայրերի հայկական համայնքներին մասնակցելու «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային 2-րդ փառատոնին, որը պիտի տեղի ունենար 2006թ. հունիսի 23-ից 30-ը: Կրասնոդարի մշակույթի և կրթության հայկական «Նարեկ» կենտրոնի սաները սրտատրոփ սպասում էին ամառային արձակուրդներին, որպեսզի իրենք էլ հանդես գան Հայաստանում անցկացվելիք փառատոնում: Վերջապես եկավ բաղձալի օրը:

Ես երկրորդ անգամն է, որ մասնակցում եմ փառատոնին. առաջին անգամ որպես Կրասնոդարի «երկրամաս» հայկական թերթի թղթակից, իսկ այժմ և՛ որպես լրագրող, և՛ որպես պատվիրակության ղեկավար: Մեր «Նարեկ» կենտրոնից Երևան ժամանեց 22 հոգի, այդ թվում՝ որպես ստեղծագործական խումբ 5-14 տարեկան

ցահանդեսների ու միջազգայնացման մուտքը ևս անվճար էր: Հունիսի 27-ին Կրասնոդարի «Նարեկ» կենտրոնի մասնակապատանեկան ստեղծագործական խումբը (Եվա Բայադյան, Արսեն Բայադյան, Քրիստինե Սարգսյան, Անգելինա Առաքելյան, Գոհար Ալահվերդյան) Երևանի Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում ներկայացրեց գրական կոմպոզիցիա՝ Հովի. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի, Հովի. Շիրազի, Հ. Սահյանի և այլոց ստեղծագործություններից: Չնայած որ «Նարեկի» սաները հայերեն արտասանում էին ռուսական առոգանությամբ (նրանք բոլորն էլ Ռուսաստանում ծնվածներ են և շատերն առաջին անգամ էին Հայաստանում), սակայն նրանք արժանացան հանդիսատեսի բուռն ծափահարությունների: Բացի սանուցից ներկայացվեց նաև հայկական ժողովրդական պար (Աննա Մոսիսյան) և երգ (Նառա Ռսկանյան):

Երկրորդ փառատոնին 20 երկրներից մասնակցեց 2000 մարդ. սա գերազանցում է նախորդի մասնակիցների թիվը: Ամենից շատ եկել էին Ռուսաստանից՝ 264 հոգի: Պարզ է, որ եղան կազմակերպչա-



Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում:

մով և ծրագրի խտացման պատճառով Սանահինի և Հաղպատի վանքերը դուրս էին մնացել ծրագրից, այդ իսկ պատճառով մեր պատվիրակությունով որոշեցինք փա-

մտ: Ամառային արձակուրդներից հետո՝ օգոստոսի վերջերին, նրանք ևս կվերադառնան Կրասնոդար:

Ի դեպ, օգոստոսի 18-20-ին Ծաղկածուրում կանցկացվի ուսուցիչների համահայկական կրթական երկրորդ խորհրդածողովը, որին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև «Նարեկ» կենտրոնը: Խորհրդածողովին կմասնակցենք ես և «Նարեկ» կենտրոնի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Երազիկ Հարությունյանը:

Վերջում ցանկանում եմ «Ձայն համշենական» թերթի միջոցով մեր պատվիրակության անունից շնորհակալություն հայտնել ՀՀ իշխանություններին, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն տիկին Թամարա Պողոսյանին և բոլոր նրանց, ովքեր իրենց կազմակերպչական ունակությունները, եռամիջկամ նյութական միջոցներն էին ներդրել փառատոնը բարձր մակարդակով անց-

ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՄՇԱԿՈՒՅԹ

յոթ երեխա, մյուսները եկել էին հայրենիքին մոտիկից ծանոթանալու: Կրասնոդար

կան թերություններ, որոնք հետզհետե կշտկվեն, բայց կային հարցեր, որոնք



Բաշ-Ապարանի հերոսամարտին նվիրված հուշարձանի մոտ:

քաղաքի Պաշկովսկի ավանից անհատական հայտերով եկել էին նաև տեղի հայկական համայնքի նախագահ Գևորգ Սերոբյանը (խմբի ղեկավար), հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Գալինա Սարգսյանը, էստրադային երգիչներ Գայանե Զախարովան և Ալեքսեյ Մուսատովը: Փառատոնին մասնակցող ստեղծագործական խմբերը հնարավորություն ունեցան ոչ միայն ելույթներ ունենալ մարզերում, այլև ծանոթանալ Հայաստանի տեսարժան վայրերին: Մենք եղանք Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, Գառնիում, Գեղարդում, Վաղարշապատում, Գավառում, Սևանում և այլն: Մեր սաներն իրենց երգով, պարով և ասմունքով հիացրեցին հանդիսատեսին:

Մեկ օր հատկացված էր Երևանի թանգարաններին, որոնց մուտքը փառատոնի մասնակիցների համար անվճար էր: Ի դեպ, փառատոնի բոլոր համերգների, ցու-

կախված չէին հիմնադրամի աշխատանքներից, օրինակ՝ Կրասնոդարի երկրամասի Լազարևսկի շրջանի «Համշեն» ժողովրդական երգի-պարի (37 մարդ), հայկական ժողովրդական «Նաիրի» (20 մարդ), «Դեղձահիկ» վոկալ (5 մարդ), Տուապսեի «Սար» երիտասարդական էստրադային (14 մարդ) համույթները հայտ էին ներկայացրել մասնակցելու փառատոնին, սակայն հովանավոր չուներանալու պատճառով չկարողացան գալ Հայաստան: Դրան հակառակ կային խմբեր, որոնք նախապես հայտ չէին ներկայացրել, օրինակ՝ Մոսկվայի «Վերածնունդ» երգչախումբը (20 մարդ), բայց ժամանել էին Երևան: Ահա այս դժվարություններն էին, որ ստիպում էին փոփոխություններ մտցնել նախօրք կազմված ծրագրերում:

Նախատեսված էր, որ մասնակիցները կարողանան ծանոթանալ Հայաստանի գեղատեսիլ վայրերին: Ժամանակի առու-

նատոնի ավարտից հետո ուղևորվել Ալավերդու շրջան: Մինչ Ալավերդի հասնելը, հուլիսի 1-ին եղանք Խարբերում, այցելեցինք Կարմիր Ավետարանի եկեղեցի, որը կառուցվել է 1997 թ., իսկ հուլիսի 2-ին, ինչպես որոշել էինք, ուղևորվեցին դեպի Սանահին ու Հաղպատ: Ճանապարհին՝ Աշտարակի ու Ապարանի սահմանագծում, տեղադրված էր Մեսրոպյան ոսկեդենիկ Այրուբեանի արձանախումբը: Յուրաքանչյուր տառ առանձին քանդակված էր հայկական կարմիր տուֆ քարով: Կանգ առնելով այս եզակի հուշարձանի մոտ «Նարեկի» սաները բարձրաձայն հնչեցրին այբուբենը: Ապարանում եղանք Բաշ-Ապարանի հերոսամարտին նվիրված հուշակոթողի մոտ, որից ոչ հեռու գտնվում է նաև Դրոյի (Դրաստամատ Կանայանի) գերեզմանը: Երբ հասանք Սպիտակ՝ երկրաշարժի էպիկենտրոնը, բնականաբար, մեր ուրախությունը փոխարինվեց տխրությամբ: Հունիսի 3-ին եղանք Սանահինի վանքում, որը եղել է միջնադարյան նշանավոր հողկորկրթական կենտրոն: Սոխակ Սիմոնյանը մանրամասն ծանոթացրեց վանքի պատմությանը. այն կառուցվել է 10-13-րդ դարերում, սակայն, ցավոք, այդ գեղեցիկ կոթողը այսօր ունի վերանորոգման խիստ կարիք: Սանահինի համալսարանում են դասավանդել միջնադարի մեր մի շարք նշանավոր գիտնականներ՝ Գրիգոր Մագիստրոսը, Վարդան Արևելցին և այլք, այստեղ գրվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Հաղպատի վանքը ևս միջնադարի հողկոր-մշակութային խոշոր կենտրոններից է եղել: Ի դեպ, մի քանի տարի Հաղպատում է ապրել երգի արքա Սայաթ Նովան:

Երևան վերադառնալուց հետո, մեր խմբի մի մասը մեկնեց Կրասնոդար, մյուսները մնացին Հայաստանում, ոմանք գնացին Ղարաբաղ՝ իրենց հարազատների




Սանահինի վանքում:

կացելու համար: Այն համայնքեց աշխարհի տարբեր ծայրերում սփռված մեր հայրենակիցներին, նրանց մեջ բարձրացրեց հայկական ոգին:

Ցանկանում եմ նաև նշել, որ փառատոնի բոլոր մասնակիցներին հանձնվեցին դիպլոմներ, իսկ որոշ պատվիրակությունների ղեկավարներ (այդ թվում՝ «Նարեկի») փառատոնի կազմակերպչական աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու համար արժանացան պատվոգրերի:

ԱՄԱԼՅԱ ՄՈՍԻՆՅԱՆ
Կրասնոդարի «Նարեկ» կրթամշակութային կենտրոնի նախագահ, պատվիրակության ղեկավար



1922թ. գարնանը, մի գեղեցիկ օր, Սեբաստիայի ամերիկյան որբանոցից մի խումբ որբ պատանիներս, զինված գանազան գույնի տակնապաններով, շրջապատած որբանոցի սիրված ուսուցիչ Լևոնին, ճանապարհվեցինք Բրզանի, երբեմնի հայկական այդ գյուղը, որտեղ ծնվել ու իր մանկությունն էր անցկացրել արևմտահայ անվանի բանաստեղծ Դանիել Վարուժանը: Գնում էինք մեծարելու մեծ բանաստեղծին նրա եղբորական մահվան 7-րդ տարեկիցի առթիվ: Թուրքական յաթաղանին զոհ գնացած մեկուկես միլիոն հայերի պես Դանիել Վարուժանն էլ չուներ իր շիրիմը: Սեբաստիան՝ երբեմնի հայ Արծրունի թագավորների քաղաքը, թեպետև զուրկ էր անտառներից, այնուամենայնիվ, Սեբաստիայի գարունն իր հմայքն ուներ: Ամեն տարի գարնանը Սեբաստիան շրջապատող լեռները զարդարվում էին անհամար գույնզգույն ծաղիկներով:

Բրզանիքը Սեբաստիային ամենամոտ հայկական գյուղերից էր: Մենք՝ որբերս, քայլում էինք բոկոտ, կարճ տաքատներով, գլխաբաց: Գնում էինք արտերի արահետներով: Մեր գլխավերևում թռչում էին մի քանի արագիլներ, որոնք իրենց կտուցներով ցախ էին տանում դեպի ձայն կողմում գտնվող մարգագետնում խոյացող բարդիները՝ վերանորոգելու իրենց հին բները: Այդ մի խումբ բարդիները, եթե թուրքերի կացնի զոհը չէին դարձել, պատճառն այն էր, որ ինչպես քրիստոնեական, այնպես էլ մուսուլմանական աշխարհում արագիլի բույն դրած ծառը չեն կտրում:

Ինձ շատ էր հետաքրքրում Բրզանիք գյուղը ոչ միայն այն պատճառով, որ բանաստեղծ Վարուժանը ծնվել էր այնտեղ, այլ նաև նրա համար, որ ես երբեք Սեբաստիայի որևէ հայկական գյուղում չէի եղել: Ես սպասում էի, հանձինս Բրզանիքի տեսնել մի լավ ու շեն գյուղ: Մանավանդ, երևակայում էի, որ բանաստեղծը ծնված պետք է լիներ մի փառավոր տան մեջ:

Մենք մեր ճանապարհին երգեցինք մի քանի երգեր՝ բոլորն էլ նվիրված հայ ժողովրդի սիրված հերոս Անդրանիկին:

Անցանք մի շատ բարակ գետակ, որի ջրերը, շատ հավանական է, շուռ էին տվել դեպի արտերն ու մարգագետինները: Այդ բարակ ջուրը հազվել թոքեց մեր ունաթաթերը: Մենք կամք առանք քարուքարեղ եղած գյուղի կիսավեր եկեղեցու առաջ: Եկեղեցու խարխուլված զմբթի ծայրին վիրավոր թռչնի մնամ երկու թևերը կախ, մեկ ոտքի վրա կանգնած էր սզավոր խաչը: Կարծես գյուղը թե՛ օրից, թե՛ ցամաքից ռմբակոծության էր ենթարկվել: Ոչ մի կենդանի շունջ չէր երևում գյուղում: Գյուղի երբեմնի բնակիչները 1915թ. ենթարկվել էին բռնազաղթի և կոտորածների: Դատելով Բրզանիքի ավերակներից, այն կառուցված էր եղել չքոծված աղյուսներով: Փայտի հետք անգամ չկար:

Բոլորիս վրա մի տեսակ թախծ էր իջել, բոլորս տխուր էինք: Մեզանից յուրաքանչյուրը մտքով թռել էր իր հայրենի գյուղ, որն, անկասկած, նույնպես ավերակույտի էր վերածվել ջարդարարների կողմից: Դեռևս ճանապարհին մեր ուսուցիչը ասում էր, որ Բրզանիքում անպատճառ կլինեն վերապրողներ և վերադարձողներ, որոնցից կիմանանք Վարուժանի տան տեղը: Այժմ կանգնել էինք ու չգիտեինք մեր անելիքը: Հանկարծ մի քանի տղաներ միանգամից ձայն տվին.

— Պարոն Լևոն, ծոխը, ծոխը:
Բոլորս մեր աչքերը հառեցինք դեպի այն կողմը, որտեղից քուլա-քուլա երկինք

Եղեմի տարիների մասին Աղասի Քյոսեյանի հուշերը («Ապրիր որպես հայ» և «Գայլը») տպագրվել են «Չայն համալսարան» թերթի 2005թ. NN 3-4-ում և NN7-8-ում: Վերջերս նրա թերթի մեջ գտա նրա հուշագրության մի սևագիր, անավարտ հատված՝ «Այցելություն Բրզանիք» վերնագրով, որը ներկայացնում էր ընթերցողների ուշադրությանը: Հեղինակը ծնվել է 1905-ին Տրապիզոնի մահաբնիկ Սամսոնի գավառի Թերեզի գավառակի Թելիփուղար գյուղում: Եղեմի օրերին նրանց բազմաճյուղ ընտանիքից և ութ երեխաներից փրկվել են միայն ինքն ու ավագ քույրը՝ Մարիամը: Այսպես, Վերապատվել է Սեբաստիայի, Կորնթոսի և Մարսելի որբանոցներում, այնուհետև՝ 1928-ին, Փարիզում ամուսնացել է նույնպես որբ, Կորնթոսի (Հունաստան) և Մարսելի որբանոցներում հանգրվանած չարձամբացի Արշալույս Պորզակյանի հետ: Իմանալով, որ ավագ քույրն ապրում է Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջանի Նեֆտեգորսկ գյուղում, 1936-ին կնոջ և երկու երեխաների հետ հայրենադարձվել է Հայաստան: 1946-ին տեղափոխվել է ծովափնյա Դագոմիս ավան: 1951-ին քաղաքական մեղադրանքով դատապարտվել է 10 տարվա ազատազրկման, բայց 1955-ին արդարացվել է և բնակություն հաստատել քրոջ մոտ՝ Նեֆտեգորսկում, ուր տեղափոխվել էր նրա ընտանիքը: 1963-ին կնոջ և երեք երեխաների հետ վերադարձել է Երևան, բայց հաճախ է մեկնել ազգականների մոտ՝ Նեֆտեգորսկ և Չեռնիգովսկոյե, ուր և մահացել է 1975-ին և թաղվել Նեֆտեգորսկում:

Հուշագրության մեջ հիշատակվող ուսուցիչ Լևոնը, ամենայն հավանականությամբ, Սեբաստիայի Ամերիկյան քույրի շրջանավարտ, ուսուցիչ Լևոն Պոտոսյանն է, որը հետագայում բնակվում էր Մեքսիկայում: Իսկ թժիշկ Խոսրով Չեքիմյանը Սեբաստիայի հանրաժամանոթ դեմքերից էր, սովորել է Բեյրութում, այնուհետև վիրաբույժ աշխատել Սեբաստիայի Ազգային հիվանդանոցում: Որոշ ժամանակ բնակվել է Տրապիզոնում, որտեղից էլ տեղափոխվել է Երևան: Ես Թուրքիայում ռենտգենի առաջին մասնագետներից էր:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Եր բարձրանում սև ու թանձր ծուխը: Պարոն Լևոնը ինձ և ուրիշ երկու պատանիների հրամայեց.

— Դու՛ն, դո՛ւն, դո՛ւն, շուտ վազեցե՛ք ու մի լուր բերե՛ք:

Երբեքով ավերակների միջով վազ տվինք դեպի ծուխը և այն շրջապատեցինք: Ոչ ոք չէր երևում, դա կրակ չէր, կրակի նշույլ անգամ չէր երևում: Մի քանի հարմար քարեր իրար էին մոտեցված, որոնց վրա կար պղնձից մի փոքր կաթսայիկ, որի տակ ծխում էր դաշտից հավաքված չոր աթարը: Մի մեծ տան ավերակների բակում էր այդ:

ԱՂԱՍԻ ՔՅՈՍԵՅԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՐԳՆԻՔ

Քանզված տան մուտքի մասը կանգուն էր մնացել, որտեղ դռան տեղ կախված էր հնամաշ, կարկատված ինչ-որ կարպետի մնամ մի բան, որը թեթև զեփյուռը հանգիստ օտորոնում էր:

— Մեծ մայրի՛կ, մեծ հայրի՛կ, քեռի՛, քեռեկի՛ն, հորեղբա՛յր,— սկսեցինք ձայն տալ:

Մենք նույնը կրկնեցինք մաս թուրքերեն: Կամաց բարձրացավ վարագույրի ծայրը և զարմացած ու անակնկալի եկած պառավ տանտիրուհին դուրս եկավ: Նա մի փոքրակազմ, ամբողջովին սպիտակած մազերով և, սակայն, դեռևս աշխույժ կին էր: Նա զույգ ձեռքերը բարձրացրեց, տարավ դեպի ճակատ, արևի դեմ հովանի արեց, դանդաղ քայլերով մոտեցավ մեզ: Կարծես այդ ավերակների բարի ոգին էր այդ ծերունագարդ կինը, որին ամմիջապես համակրեցինք: Մեզ ուշի-ուշով դիտելուց հետո հարցրեց.

— Բարով եք եկել, յավրուներ, հազար բարով, դուք «Արամյանի» որբերե՛նք, թե՛ քույրե՛ք:

— Մեծ մայրիկ,— պատասխանեցինք մենք,— այժմ «Արամյան» որբանոց չկա, «Արամյանի» որբերն էլ տեղափոխվեցին մեզ մոտ, այնպես որ այժմ բոլորս էլ քույրեք-որբանոցից ենք:

— Է՛, յավրուներս, ոտքի վրա կեցաք, դո՛ւն յավրու՛ն, աս քարին վրա նստե, աղվոր քար մըն է, դո՛ւն այս տափակ քարին վրա նստե, դո՛ւն հոս՝ այս կալովը քարին նստե,— ասելով, առաջարկեց, որ բոլորս նստենք:

Մենք շնորհակալություն հայտնեցինք պառավին, սակայն չնստեցինք:

— Մեծ մայրիկ, ո՞վ քանդեց ու ավերեց ձեր գյուղը,— այդ հարցը պատանեկան միա՛նիտ հարց էր, որ տվեցինք մեծ մայրիկին:

— Է՛, յավրուներս, դուք չե՛ք գիտեր ով կընես սասանկ բաներ, թուրքը, յավրուներս, թուրքը, թուրքեն զատ ո՞վ կընես: Թող թալանեին, թող կողոպտեին, զոհես խնայելին մեր ազգին, բոլորին քշեցին, տարին, անակ ալ ետ եկող չէրավ:

— Հապա մեծ մայրիկ, դու՛ն ի՞նչ ես անում միմակդ այս ավերակների մեջ,— հարցրեցինք մենք:

— Ես հոս չեմ կիմար,— պատասխանեց մեծ մայրիկը,— ես կարծիք քաղաքը՝ աղջկանս ու փեսայիս քով, ամեն տարի գարունը կուգամ հոս, հոս՝ գետին քով, պատիկ պարտեզ մը ունիմ, անոր հետ ժամանակս կանցնիմ: Երկու տարի առաջ հիվանդացա, գնացի դոկտոր Խոսրով Չեքիմյանին քով: Աստված անոր օրն ու արևը երկար ընե, ըսավ. «Մայրիկ, քու դեղդ քալելն է, օրական քանի մը ժամ քալե կամ աշխատե»: Հիմա ես երկու տարի հոս կուգամ-կերթամ և անոր խորհուրդներուն վրա աղկե եմ:

Երբ մենք նրան հայտնեցինք մեր գալու

ԴՈՒՆԵՂԻԱ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀՈՐՍ ԲԱՆՏԻՆ ՄԵՋ

Դեռ փոքր էի. եկա քեզի մինավոր, Մուք զընդանիդ մեջ այցի: Մայրս հիվանդ էր. կը շըրջեի ե՛ս ազատ Մեջտեղ բանտի և մահճի:

Լուր տըվին քեզ. եկար առջևը դըրան Վանդակապատ՝ որ – ոճի՛ր – Կը բածներ մեր ողջագուրումը կըղկաթ: Եկար անխոս, վըշտակիր:

Ո՛րքան միհար էիր և ո՛րքան աչքերդ Շարավ էին արևու. Մորուքիդ տակ, կարծես սուկի վրա բուսած,

Ո՛վ հայր, մեռել մ'էիր դու:

Նըշմարելուդ պես զիս ժըպտիլ ըսկըսար. Բայց այդ ժըպտը բարի, Այդ տուտ ժըպտն էր
Մու՛նուֆար մը ծաղկած
Լըճի մը վրա արտոսրի:

Կարկառեցիր սև վանդակին ետևե Շըրթունքներդ իմ շըրթներուն. Բայց իրարու անոնք, ավա՛ղ, չըհասած՝ Մեր համբույրին դողդոջուն՝

Նույն ժամանակ եղան օրրան և դագաղ: Ո՛հ, պիտի ո՛րչափ քեզի Բաղձայի տալ ընդգրկումի մը մեջ տաք՝ Ազատ աշխարհը դուրսի,

Եվ իմ փոքրիկ բիբերըս քու բիբերուդ Տեղալ երկինքն անասհման, Սըրտես սըրտիդ պարպել
բոլոր օրերս այն Որ արևու տակ անցան:

Մուք բանտիդ մեջ գարնան վարդերը ամբողջ Պիտի լեցնել ուզեի, Կամ ծիղը հասակս ու
ապագան հասակիս Պիտ՝ հոն թաղել ուզեի:

Ո՛վ տըխուր ժամ: Թեզ մի առ մի պատմեցի Սև վիպակները մեր տան, Հանիիս մահն ու հիվանդ մորս
հազը խուլ
Լըռության մեջ գիշերվան.

Ըսի թե մեր տանիքին վրա, լուսնին տակ, Բուերը պար կը բըռնեն, Թե այս տարի մեր վարդենին չորացավ Գերեզմանատան խորշակեն:

Կը լըսեիր զիս և հարցում կ'ընեիր, Երբ հըրաման մը վարի, Կույր հըրաման մ'եկավ ըզմեզ բածներու... Դարձա՛ր... առանց համբույրի...

Ու ես երկա՛ր ետևեդ պիշ մայելով, Հա՛յր իմ, մինակ, հոն լա՛ցի. (Մինչ կուրծքիս տակ բաշ կը թթվեր ռիս մը նոր)

Միտս աչքերես քանեցի:

...Ո՛վ կյանք սիրո, լանջ քըրտինքի, սիրտ փուշի,

Ցեխին նետվա՛ծ սըրբություն, Արևուն բորբ հոսանքներուն
դեմ գոցված,

Ո՛վ երակներ ազագուն:

Տեսա՛ որ ձեզ հետ, ձեզի հետ սուզեցան Եղեմի մեջ, արտալած, Մուրբերն ամեն կրոնքի,
ամեն շուշաններ Եվ Հիսուսներ թըքըմված:

Յավրու – ծագուկ
Յավրու – ծագուկ
Եմնի – կոշիկի տեսակ



Սկզբը՝ Մախրոդ համարում

ՈՒԹԱՄՅԱ ԳՈՅԱՄԱՐՑ ԶԱՆԻԿԻ ԼԵՆԻՆԵՐՈՒՄ (ՍԱՄՍՈՆ. 1915-1923թթ.)

Իր տևողությամբ աննախադեպ այս պայքարի բազմաթիվ մանրամասներ են իր «Պատմություն Հայկական Պոնտոսի» գրքում ի մի է բերել Հովակիմ Հովակիմյանը (Արշակունի):

1915-ի արդեն ամռան կեսին լեռներում ապաստանած խմբերը կապ հաստատեցին միմյանց հետ ու մահվան գնացող տարագիր քարավաններին ուղեկցող ժանդարմների վրա անակնկալ հարձակումներով ազատում էին բազմաթիվ հայերի, ինչպես նաև զենք ու զինամթերք հայթայթում: Գանձիկի լեռներում ամրացած գրեթե բոլոր մարտախմբերում էլ կային կանայք ու երեխաներ: Վերապրածները հիշում են, որ այդ ժամանակ Քելթեփեի հատվածում կային շուրջ 150 հոգի (լավ-վատ զինված էին 50-ը), իսկ Չարշամպայի կողմերում 70-80 հոգանոց խումբ: Մարտախմբեր կային նաև Սամսոնում:

Օգոստոսին ժանդարմական կենտրոնատեղի հանդիսացող Քեռքլուկ գյուղում խոշոր ստորաբաժանման ծանր պարտությունն ու յոթ ժանդարմի սպանվելը սարսափ տարածեցին շրջակայքում: Իսկ հայրուկային պայքարն ուժեղանում էր: Օրեր անց մարտիկներն ինացան, որ Քեռքլուկում թուրքերը ողջակիզելու համար գյուղի եկեղեցուն էին հավաքել մնացած հիստուն հայ ծերունիներին և 85-ամյա Տեր Միքայել քահանային: Երեսուհիին գողացան մարտախումբը երբ տեղ հասավ, ծղոտի դեզերը, որոնցից մեկի վրա կանգնեցրել էին ծեր քահանային, արդեն այրվում էին: Բայց ողջակիզվող հոգևորականը հասցրեց տեսնել սկսված հզոր հարձակումն ու վերջին օրհնությունը տալ մարտիկներին: Թշնամին տասը սպանված ու չորս գերի թողնելով փախավ: Մարտիկներն այդ օրն առանց խտրության կոտորեցին հանդիպած բոլոր թուրքերին: Քեռքլուքն ամայացավ, ու թուրքերը երբեք չհամարձակվեցին այնտեղ վերաբնակվել:

Սեպտեմբերի 6-ին մարտիկները պաշարվեցին Սուլեյման չաուշի խոշոր չեթեախմբից, որին էլ իրենք էին որոնում գործած չարիքների վրեժը լուծելու համար: Կռիվը սկսվելուն պես հայակերը սպանվեց, ու չեթեաները փախան: Մարտիկները հեռանալիս ծանր դաս տվեցին նաև իրենց վրա կրակ բացած թուրքական մի գյուղի:

Երբ մարտախմբերում եղած պատանիները փոքրիշատե փորձ ձեռք բերեցին, նրանցից տասներեք հոգանոց առանձին խումբ կազմվեց, որի առաջին գործը եղավ (չնայած հրամանատարության խիստ արգելքին) վրեժխնդիր լինել հայտնի հայակեր Իսմայիլ չավուշից: Գազանը տանը չէր և սպանեցին որդուն ու ազատեցին առևանգած հայ աղջկան:

Քարավանների վրա հարձակումներով բավական մթերք էին ձեռք բերել ու 1915-16թթ. ձմեռը հանգիստ անցկացրին հսկա քարայրներում: Փոքրիկները գրել ու կար-

դալ էին սովորում, պատանիները զբաղվում զինավարժությամբ:

Գարունը դեռ չեկած խմբերը վերստին կապվեցին միմյանց, ապա գերված սուր-

ՏԻԳՐԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՆՏՈՍ

հանդակի նամակից իմացան, որ Սեբաստիայից խոշոր զինվորական պարենաբարձ քարավան է գալիս, իսկ փետրվարի 25-ին իրենց դեմ խոշոր հարձակում է սկսվելու: Գրավելով քարավանը, լրիվ լուծեցին սննդի ու զինամթերքի խնդիրը, առաջին անգամ ունեցան ձեռնառումներ և ոգևորված սպասում էին գալիք մեծ կռիվին:


Երկօրյա ծանր կռիվներից հետո, երբ 150 մարտիկներն արդեն օրհասական վիճակում էին, օգնության հասան այլ մարտախմբեր և, ու թշնամին մեծ կորուստներով ետ շարավեց: Այդ կռիվում զոհվեց մարտախմբի անկրկնելի հրամանատար Տիգրան Ջեթունճյանը:

Փետրվարի 25-ին վերադասավորելով ուժերը՝ թշնամին եկավ վերջին ու վճռական հարձակման, բայց արդեն տեղ էին հասել լեռներում ամրացած հայրուկային բոլոր խմբերը, և մի քանի հազարանոց թշնամին ընդամենը 350 մարտիկներից ուղղակի խայտառակ պարտություն կրեց կորցնելով անգամ ընդհանուր հրամանատարին: Իսկ հայերը տասներկու զոհ ունեցան: Հուտով ռուսական բանակը մտավ Տրապիզոն, բայց ճանկիկ լեռներում ապաստանած շուրջ 2000 հայությունից նավեր բարձրանալ թույլ տվեցին միայն կանանց ու երեխաներին: Մարտիկները հետո միայն հասկացան, որ ռուսական հրամանատարության համար իրենք լոկ թշնամու թիկունքում գտնվող հարվածային ու քայքայիչ ուժ էին և դարձյալ քաշվեցին լեռները: Նոյեմբերի 26-ին չորս թն-

դարկված մի քանի մարտախմբեր եկան ու պատմեցին այնտեղ սկսված հեղափոխական քառուսի մասին՝ ի դերև հանելով Ռուսաստան անցնելու հույսերը: Իսկ

կռիվները շարունակվում էին, շրջանի խոշոր հայակերները մեկը մյուսի ետևից սպանվում: 1918-ի օգոստոսի վերջին հերթական «ներումը» եղավ: Շատերն արդեն իջել էին գյուղերը, իսկ ռազմաճակատներում պարտություն պարտության ետևից կրող թուրքերը՝ սակվել: Բայց 1919-ի աշնան սկզբին քեմալականներն աշխուժացան, վերսկսվեցին թալանն ու սպանությունները: Թուրքերը, սուրը իրդեհելով ողջակիզեցին Սուլուճագ գյուղի մարտախմբի հրամանատար Հովհաննես Ուրունյանի ընտանիքը, ապա սպանեցին Արթին Մինասյանին ու այլ խմբապետներին:

Իսկ մինչ այդ, 1919-ի հուլիսի 25-ին չեթեախմբերը պաշարեցին Քեռքլուքը, բայց հերթապահող դիրքապահները հասցրեցին ոտքի հանել քնած ժողովրդին: Հարձակումը ետ մղվեց մեծ դժվարությամբ ու հրամանատարի՝ Ավետիս Չազրյանի կյանքի գնով: Դրանից հետո թուրքերը շուրջ մեկ տարի սակվեցին: Իսկ 1920-ի օգոստոսին զենքերը հանձնելու խիստ հրամանը հայերին պարտադրեց իսկույն ամրացնել Քեռքլուքի դիրքերը: Սեպտեմբերի սկզբին 1500-անոց խուժանն ու զորքը հարձակվեցին գյուղի վրա (ժողովուրդը հասցրել էր վաղօրոք տեղափոխվել անտառ), բայց հարյուր մարտիկների դեմ հինգժամյա կռիվից հետո մեծ կորուստներով նահանջեցին: Օրեր անց երկրորդ խոշոր հարձակումն արդեն դիմադրվեց բավական մեծ դժվարությամբ, որից հետո մարտիկները վերջնա-



դանոթ ունեցող բազմահազար թշնամին, որի կեսը կանոնավոր զորքեր էին, հզոր հարձակում ձեռնարկեց հազիվ 450 մարտիկների դեմ, որոնք պիտի պաշտպանեին նաև 200 հույն ընտանիքների: Կեսօրից հետո թշնամին բավական դիրքեր էր գրավել: Մութ ընկնելուց հետո, երբ հայերը դաշույններով ու ձեռնառումներով դիմեցին հուսահատ հարձակման, կողմնորոշումը կորցրած թուրքերը սկսեցին կոտորել միմյանց: Բայց այդ արյունալի օրը հայերին շա՛տ կյանքեր արժեցավ:

1916-1917թթ. ձմեռը նույնպես ցուրտ և ծանր էր: Մատնության արդյունքում զոհվեցին մարտախմբի հրամանատար Զիլ Օվանեսը և Աղդաղի լեռներից Կովկաս անցնելու համար այստեղ եկած Աղան Չավուշը, ով Յոզղաթի դիմադրության հրամանատարներից էր: Մարտիկները սպանեցին հայտնի հայակեր Քեռնյուրիի օղլուն: Քեռքլուքում հաստատվել փորձող թուրք գաղթականները, ծանր դաս ստանալով, ընդմիջտ հեռացան, իսկ մարտիկները հրդեհեցին գյուղը:

Թուրքերը մի քանի անգամ «ներման» հրամանագիր բերեցին, գայմագան անձամբ հանդիպեց մարտիկներին, բայց սպաարդյուն. «Ձեռքը վայր կդնեք, երբ մեր ընտանիքները մեր տներում տեսնենք»: Ցավոք, շատերն էլ հավատացին ու...

Ռուսաստանից հետախուզության ու-

կանապես հեռացան լեռներ, իսկ գայմագանը թրքացած հայ դավաճանների օգնությամբ ձերբակալեց, ապա սպանեց խմբապետ Կարապետ Թահմազյանին (Պելի Հոճա)՝ իր տասը մարտընկերների հետ: Մարտախմբերի խորհրդակցությունում որոշվեց շեղող հարձակում ձեռնարկել գյուղերի վրա ու երբ քաղաքից զորքը օգնության հասներ, երկրորդ խումբը պիտի գրոհեր բանտը: Բայց կալանավորվածներին մի հույնի մատուցած արդյունքում տեղափոխեցին կենտրոնական բանտ, որտեղից նրանց ազատելու արդեն անհնար էր, և իրագործվեց միայն ծրագրի՝ թուրքական գյուղերին հարվածելու մասը:

1920-21թթ. ձմեռը լեռներում ապաստանած մարտիկներին համար հանգիստ անցավ: Փետրվարին քեմալականները փորձեցին մեկ հարվածով ոչնչացնել թե՛ հայ և հույն մարտախմբերին, թե՛ հակաքեմալական ուժերին, բայց տևական կռիվները լուրջ արդյունք չտվեցին: Ծանր պաշարումն ու կռիվները շարունակվում էին, երբ անակնկալ կերպով «ներման» հերթական հրամանագիրը եկավ, որին քեռքլուքցիներից բացի, գրեթե բոլորը հավատարմով իջան գյուղերը: Ներման այս քաղաքականությունը տևեց մինչև միմյանց տարածքում պատանդ մնացած մեծաթիվ հույների և թուրքերի փոխանակու-

թյունը: Առիթից օգտվելով՝ մարտիկները կարողացան ևս 200 հոգու ուղարկել Կովկաս ու լեռներում մնացին մեռած: Ապա իմացան, որ լեռներում են նաև Հովհաննես Ուրունյանի, Կարապետ Սարյանի, Մեսրոպ Յազըճյանի ու Սահակ Համալյանի մարտախմբերը: Կենտրոնանալով Թերմեի անտառներում՝ փորձեցին անցնել Ռուսաստան, ինչը ձայնողվեց հետապնդումների սաստկացման պատճառով:

1921-ի մայիսի սաստիկ ընդհարումից հետո բռնություններ սկսվեցին անգամ ներման հրամանագրերին արձագանքած ու խաղաղ ապրող հայերի նկատմամբ, որոնցից շատերը վերստին քաշվեցին լեռներ: Հալածանքների հետևանքով Քեռքլուքի շուրջ վաթսուներեք մի գիշեր փախել էին անտառ, և ի վերջո մարտիկները գտան ու փրկեցին նրանց: Իսկ օգոստոսին ծուղակը գցեցին 1915-ին իր անօրինակ դաժանությամբ տխուր հռչակի արժանացած Ջելի չաուշին ու ողջ խմբին... Ապա եկավ տարիներ շարունակ թրքությանը քրիստոնյաների և հատկապես հայերի դեմ գրգռած շեյխի ու Կարապետ Թահմազյանի մատուցիչ հերթը, որոնք սպանվեցին հենց թուրքերի աչքի առջև:

Նոյեմբերին մարտիկների վրա շուրջ 1000 չեթեաներով հարձակման եկավ տխրահռչակ Թոփալ Օսմանը՝ լուծելու սպանված քեռքլուք վրեժը, սակայն հայերին պաշարելիս ինքը հայտնվելով ծուղակում, խայտառակ կերպով փախավ՝ ծաղրի առարկա դառնալով անգամ թուրքական մամուլում: Բայց հայակերն իր վրեժը հայ և հույն անգամ ժողովրդից լուծեց:

1921-22թթ. ձմեռը հայրուկները հեշտ անցկացրին, քանի որ նախապես հավաքել էին անհրաժեշտ ողջ պաշարը: Գարնանը մեծ դժվարություններով կարողացան նավով գաղտնի Կովկաս ծամվել ևս 250 վերապրածների, ապա մասնակի զինումներով ու առանց զենք հանձնելու համաձայնեցին գյուղ իջնել, որովհետև մտածում էին Ռուսաստան անցնելու մասին: Իսկ քեմալական շարժումն ուժեղանում էր, և 1922-ի դեկտեմբերին ընդամենը երեք օրում սպանվեցին ներման հրամանագրերին ու թուրքի բարեկամությանը հավատացած շուրջ երեսուն հայ և հույն խմբապետներ ու մարտիկներ: 1915-ին լեռները բարձրանալուց ի վեր կռվող ուժերի նման խոշոր կորուստ դեռ չէր եղել:

Դրան հետևեցին գայմագամի սպառնալիքներն ու Քեռքլուքի երկօրյա կռիվը: Երեք գոհ տալով մարտիկները քաշվեցին լեռներ, ուր անհրաժեշտ պատրաստություն կար հետագա դիմադրության համար:

1922-23թթ. ձմեռն անցկացնելուց հետո կարողացան նավով Ռուսաստան ուղարկել ևս 75 հոգանոց մի խումբ, ու լեռներում մնացին միայն զինված երիտասարդները, որոնք որոշել էին ընդմիջտ մեկնելուց առաջ լուծել դավադրաբար սպանված խմբապետների վրեժը: Այս մարտիկները, քանի որ «ներման» հրամանագրերին չհավատալով, թուրքերի հետ չէին բարեկամացել ու գրեթե ոչ ոքի չէին ճանաչում, բաժանվելով տասնհինգ փոքր խմբերի ու մեկնելով տարբեր ուղիներով՝ ուղղակի բռնեցին պատահած բոլոր տղամարդկանց, բերեցին Չանկերիշ, ընտրած քառասունընուսին զնդակահարեցին, երկու խոշոր ազարակատերերի պատանդ պահեցին, որ թուրքերը հայերին չնեղեն, իսկ մնացած գերիներին ազատ արձակեցին, որ սրանք ամենուր թրքությանը պատմեին կատարվածը: Ծանր պատիժ ստացավ նաև Էլզրուկ գյուղը, որի թուրքերն էին սպանել խմբապետ Պետրոս Թահմազյանին:

1923-ին քեմալական կառավարությունը հայերին երկրից հեռանալու արտոնություն չնորհեց, որին շուտով հետևեց նաև ապստամբների ներումը և ամեն կողմից գալով ու միանալով իրար, վերջին 445 հայերը, որոնցից 375-ը լավ զինված էին, հեռացան Ռուսաստան:

Տրապիզոնի և շրջակայքի շուրջ 60000 հայությունից միայն 2500-ը փրկվեցին, շնորհիվ լեռներում ապաստանած, տարիներով կենաց մահու կռիվ մղած մարտիկների անօրինակ նվիրումի ու պայքարի:

Александр Скаков

Российский институт стратегических исследований при
Администрации Президента РФ, кандидат исторических наук (Москва)

АБХАЗСКИЕ АРМЯНЕ В ПРОШЛОМ И НАСТОЯЩЕМ

Армянская община Абхазии появилась в конце 1860-х гг., после преобразования Абхазского княжества в Сухумский военный отдел (1864 г.) и подавления абхазского восстания (1866 г.). Армяне – переселенцы из Турции, занимали земли, оставленные ушедшими в Турцию абхазами-махаджирами. На этом этапе более активно в Абхазию из Османской империи переселялись греки и болгары. В 1880-х гг., после новой волны махаджирства, связанного с событиями русско-турецкой войны 1877-1878 гг., миграция армян в Абхазию стала гораздо более интенсивной. Ещё более усиливается армянская миграция в 1890-х гг., после резни 1895-1896 гг. Особенно значительное число армянских семей переселилось в Гагру, селения Мцара (Бзыбская Абхазия), Эшера, Гумское-Армянское, Яштух (окрестности Сухума) и Цебельду. В результате активной скупки земельных наделов армянами – мигрантами из Турции Министерство внутренних дел Российской империи всерьез обеспокоилось запретом турецким подданным (из проживающих в Сухуме на 1897 г. 1083 армян 924 были иностранными подданными) приобретать недвижимое имущество на территории некоторых регионов Закавказья. При этом значительная часть армян-переселенцев находилась в положении батраков (в их составе армян было 47 %, греков – 20,5 %, а грузин – 8 %).



В 1886 г. в Абхазии насчитывалось 1037 армян (1,5 % населения), в 1897 г. – 6552 (6,2 %), из них 1083 проживали в единственном городе - Сухуме. По своей численности они, тем не менее, значительно уступали как абхазам, так и картвелам (грузинам, мегрелам и сванам), составлявшим, соответственно, 55,3 и 24,4 % населения региона, но превышали русское население,

составлявшее 5,7 %. На 1914 г. армянская община Абхазии насчитывала 16794 чел. (12,5 % от общей численно-

сти населения), из них 7980 проживали в сельской местности. В это время уже наметилась тенденция более быстрого роста численности русского населения Абхазии, уступавшего по своему количеству только абхазской и картвельской общинам. В начале XX в. в Сухуме функционировали армянское училище и армянская церковь. Основным занятием армян Абхазии было табаководство.

Во время постреволюционных событий 1918-1921 гг. армянское население региона поддержало национально-освободительное движение абхазов. В целом, отношения между армянской и абхазской общинами в начале XX в. складывались в позитивном ключе. Так, по словам абхазского этнографа и просветителя Симона Басария (1923 г.), «армяне ... очень осторожны к абхазам, признают за абхазской нацией исторические, юридические и насильственные права на территорию, называют себя гостями в Абхазии, охотно открывают свои двери абхазам и всячески стараются подражать гостеприимству их. К большей чести армян надостности и то, что это единственная нация в Абхазии, которая бережно относится к старинным абхазским именам местности: все их села названы древними абхазскими именами».

По ряду известных причин, данным переписей, проводившихся в советский период на территории Закавказья в

большинстве случаев сложно доверять. Достоверной можно считать перепись 1926 г., по которой армяне составляли 12,8 % населения региона. В Сухумском уезде численность армян составляла 14388 человек (из них в Сухуме – 2033 человек), в Гагрском районе – 346 человек (из них 211 в Гаграх), в Гудаутском уезде – 649 человек (из них 388 – в Гудаутах), в Кодорском уезде – 209 человек (из них 149 в Очамчире), в Гальском уезде – 26 человек. При этом большинство населенных пунктов имело смешанное население. Наиболее крупные группы армян проживали в селах Сухумского района – Цебельде, Лате, Гумисте, Дранде, Мерхеули, Эшере, Гульрипше, Башкардаше, Азанте, Николаево-Анастасиевке, Полтаво-Ольгинском. По данным переписи 1939 г., армян в Абхазии насчитывалось 49705 человек (15,9 % населения республики), из них 6607 чел. проживало в городах. На этот период армяне составляли четвертую по численности национальную общину региона, но по численности городского населения армяне уступали не только русским, грузинам и абхазам, но и грекам (большинство из которых было выселено во время войны 1941-1945 гг.). Удельный вес городского армянского населения уменьшался. Кроме того, по данным на 1937-1939 гг. в управленческом аппарате армяне составляли 12,1 %, в производственной интеллигенции – 5 %, в интеллигенции – 8,2 %. Таким образом, уровень представленности армян в элите автономии не соответствовал их удельному весу среди населения Абхазии.

По переписи 1959 г. армян в республике насчитывалось 64425 человек

Впервые за последние 70 лет в Буденновске прошел спектакль на армянском языке

В Доме детского творчества города Буденновска, впервые за последние 70 лет, был поставлен спектакль на армянском языке. Как сообщили в редакции газеты армян России «Еркрамас», спектакль по сказке Ованеса Туманяна «Пирующим пиров не занимать» был организован городской армянской общиной «Святой Крест». В спектакле были заняты ученики армянской воскресной школы Буденновска (драматургия) и ансамбль «Прикумье» (хореография) под руководством Армена Авакяна. Режисеры-постановщики и авторы сценария – активисты общины Галина Захарова и Каринэ Саркисян. Спектакль был приурочен к празднованию Дня Первой Республики Армении и поставлен в рамках объявленного в России Года Армении.

Последние спектакли на армянском языке, ставившиеся на городских сценах, прошли еще перед началом Великой Отечественной войны, когда в городе действовали армянские школы (ныне в Буденновске общеобразовательных армянских школ нет). Огромную роль в культурной жизни города в то время играл драматург, музыкант, писатель, поэт, общественный и партийный деятель, журналист Сукиас Серебрякян, именем которого в тридцатых годах прошлого столетия была названа одна из городских армянских школ (ныне городская общеобразовательная школа N 2). В связи с этим на спектакле в качестве почетного гостя присутствовала племянница Серебрякяна - Тамара Серебрякова.

По окончании спектакля были подведены итоги конкурса «Армения в моей жизни», объявленного более месяца назад городской армянской общиной. В конкурсе приняли участие люди разных национальностей, причем не только из Буденновска, но и из других регионов Ставропольского края. Всем участникам конкурса были вручены призы и дипломы лауреатов.

СПРАВКА: Город Сурб Хач (Святой Крест, ныне Буденновск) был основан в 1799 году армянами - переселенцами из Карабаха, согласно жалованной грамоте Российского Императора Павла Первого.

Среди разрушенных вандалами в Калужской области надгробий есть и армянские

На кладбище в городе Кременки Жуковского района Калужской области в ночь с Родительской субботы на Троицу от рук разрушителей пострадало почти 130 надгробий. 15 крестов и один памятник были выброшены на трассу. Как сообщили в редакции газеты армян России «Еркрамас», по полученной из Калуги информации, директор МУП «Ритуал» Николай Бабин отмечает: «Могила детей, ветеранов, которые их защищали, евреев и армян - они крошили все подряд».

Подозреваемых задержали, нападение на кладбище, вероятно, признают пьяной выходкой. В ходе розыскных мероприятий задержаны 2 молодых человека 17 и 18 лет. Следствие по делу продолжается. Но даже спустя неделю жители Кременки не перестают удивляться - объем работы преступники проделали невысказанный, ворочая тяжелые памятники. Как сообщает один из пострадавших Валерий Велицян: «У меня еще не очень пострадало, но я смотрю, что делается у других, и мне неспокойно! Я бы этих вандалов сжег живыми и будь что будет!».

Укрепляют сотрудничество

